ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1800-Ա « 13 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի Հ.1289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Արման Թումանյանի 05.05.2025թ. հ.Դ-47515-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 9-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.1289-Ա որոշման հավելվածի 8-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
13. 05.2025թ.
հ. 1800 -Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Աղաբեկ և Փառանձեմ Առաքելյաններ	Հաղթանակ թաղամաս, 25-րդ տեղամաս, հ.6ա	հողամաս	Հաղթանակ թաղամասի 25-րդ տեղամասի հ.6ա հասցեում գտնվող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 15.04.2025թ. հ.1434-Ա որոշում և վկ. հ.05032024-01-0273/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, հ.56/8	01073BMUV47U	
2	Մելիք Մուրադյան	Հ. Գյուլիքևխյան փողոց, հ.23/1 շենք, հ.15 և հ.15/1	բնակարան	Մելիք Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող, Հ. Գյուլիքևխյան փողոցի հ.23/1 շենքի հ.15 և հ.15/1 հասցեներում գտնվող բնակարաններին /վկ. հհ.07052025-01-0234 և 04032024-01-0104/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Հ. Գյուլիքևխյան փողոց, հ.23/1 շենք, բն.15	01083CARETQL	
3	Միքայել Սարգիսջանյան /լիազորված անձ/ Սահակ Թովմասյան և Սոնա Սահակյան	Նոր Նորքի 7-րդ մ/շ հ.1 շենք, հ.47	բնակարան	Սահակ Թովմասյանին և Սոնա Սահակյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Նոր Նորքի 7-րդ մ/շ-ի հ.1 շենքի հ.47 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.29112024-01-0384/ բաժանման հատակագծով առանձնացվող 43.18քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ջ. Կարախանյան փողոց, հ.1 շենք, բն.47/1	01083T4BXRUT	
4	Տիգրան Հայրապետյան /լիազորված անձ/ Ռոբերտ Վարդանյան	Արմենակ Արմենակյան /Ամառանոցային/ փողոց, հ.81	բնակելի տուն	Ռոբերտ Վարդանյանին պատկանող, Արմենակ Արմենակյան /Ամառանոցային/ փողոցի հ.81 հասցեում գտնվող բնակելի տանը /ինվ. հատակագիծ/ տրամադրել հասցե՝ Արմենակ Արմենակյան փողոց, հ.81/1	01093JPKVYKW	

5	Արման Թումանյան	Հաղթանակ 1-ին փողոց, հ.1/67	բնակելի տուն	Արման Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ 1-ին փողոցի հ.1/67 հասցեում գտնվող 125.5քմ մակերեսով բնակելի տանը /վկ. հ.27082015-01-0068, հող. 527.98քմ, շին. 9.0քմ/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, հ.1/220	01073YXN3GUL	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**